



36. ԷԹՈՒՄԻ ՀԵՔԻԱԹ

Ժամանակով ջըհել տղե մե ջըհել աղջկամ՝ խելքից կը հանե՝
կը լկտվի, աղջիկ օր կ'էրկուհոգովնա, տղեն կառնե զուր գլուխ՝ շան
թըսի պես կը կորի: Օրն օր գիկա՝ աղջիկ կը պարկի, տղեմ՝ կը բե-
րե, ի՛մալ էնե օր հեր ու մեր շիմնան, կը վերցու ղէրեխեն կը տանե
մեշեն, կը դնե ծառիմ՝ տակ, սևով-սգով գիկա տուն:

Պառավ մե չըմնօր կէրթեր մեշեն խրոշ ժողվեր, կը տեսնա՝
հանդե ծառի տակ բալուլ մե դրուկ, մըջ բալուլին տղե մե՝ չերես
ուր սիվտակ, մազերն օսկի, աչքունքնի նոր լուսնակ, գիշեր, ցերեկ
իշկիս՝ չըս կշտանա:

— Յամա՛ն,— կըսե պառավ,— իգա ո՞ր խանջուխն է բերի
թալի չողա, ըդոր մամու սիրտ գիլանքն ուտին, վերցում տանիմ,
պահիմ, ուր տերն աստված:

Կը վերցու ղէրեխեն կը բերե, էրկու ծառից ճղոր մե կը կապե,
կը դնե մեջ, կօրորե.

Օրո՞ր, օրո՞ր, անո՛ւզ գառնուկ,
Օրոր էնիմ օրորոցին.
Հալուրուրի՛, օրո՞ր էնիմ,
Անուշ քուն գա գրկանոցին:

Ճգոր գարկիմ դարի գլուխ,
Հարաֆ քամին տանե բերե,
Վերու էժ գա քըզի ծիծ տա,
Մեկիկ աստված քըզի պահե:

Պառվու տուն մեջի յեզր կէղնի, դու մ'ըսի վերու էծ մե անկաջ կէնն պառվու օրոր, սիրտ կը լցվի, աստծու հրամանքով լեզու կաննե, կըսե:

— Ես յրմնոր ծիծ պտի տամ ըզրան:

Հա՛խ աստված, իմալ կըսե՝ հմալ կէնն,— յըմնօր գիկա, ծիծ կիտա տղին, կէրթա: Օր մե չէ երկու, պառավ կը տեսնա զէծ, օր հանդե էկավ կանավ վըր տղին, ուռուկ ծծերու պտուկ մե դրեց բերան, տղեն կուշտ մե կերավ՝ թորկեց գնաց:

— Շուքր քոս տնեն, աստված, էծ քընց ուր մամ ջիդրով է:

էդ վերու էծ հմլա յըմնօր գիկա, ծիծ կիտա, թորկե կէրթա, հարի տղեն ծծից կը կտրվի: Պառավն է՝ ղտղեն կը շահե-պահե, կը մեծցու, դառձու յոթ-ութ տարեկան: Օրերուց օր մե՝ տղեն կը հարցու պառվուն:

— Դա՛ղե, իմ մամ ո՞ն է, իմ պապ ո՞ն է:

— Քու պապ,— կըսե պառավ,— չըմ գի՛նա ոն է, հմա քու մամ գինամ՝ վերու էծն է, ընի քըզի ծիծ տվեց, մեծցուց:

Ժամանակ մե գընցնա, տղեն կը դառնա տաս-տըսնուհինգ տարեկան, կէրթա դուա, հըտ տղեկներուն ճան, հոլ, արթուրմա կը խաղա, հմա՛լ շարագա, հմա՛լ ճարպիկ, օր տղեկներուն յըմնուն կը տանե, աչքեր ուրանց կը մնան բաց: Օր մը լե հմալ կէղնի, օր ճան կը խաղա հըտ թագավորի տղին, կը տանե, թագավորի տղեն կը հեռոտի, ու ա՛ռ հա կը ղարկե տղին: Շատ լե թագավորի տղա, ընի զարկե՛, ինք ձեն չը հանե՛, հմալ բան կէղնի՛, կը հասնի զարկե քիթ-մոռի կը կորցու մըջ արնին, կը լարե հարի թագավորի քոշկ ու սարեն, յետ գիկա: Թագավորի աղջիկ նստուկ կէղնի փանջարեն՝ էդ յըմեն կը տեսնա, կը ծիծղա վըր ուր ախպոր, կը ծռի վըր էթում տղին: Թագավորի տղեն գոթի տղա կէղնի, կէրթա մըտ հոր գանգատ, ըշտե հմլա, հմլա, ինք բան չըր էրի, տղեն զարկեց՝ ուր քիթ-մոռի կորցուց մըջ արնին: Թագավոր մարգ կը ճամպե, տղին կաննին բերին ուր յոտք:

— Տղա՛,— կը հարցու թագավոր,— քու անունն ի՞նչ է:

— Էթում:

— Ըսե տեսնամ՝ յորի՞ն իս ծեծի իմ տղին, իմա՛լ իս քըզի թալիմ բոնատուն:

— Թագավոր,— կըսե տղեն,— քու խոսք վըր իմ գլխուն. ըսիմ մեկ օր նահախ տեղ յառեջ քըզի զարկե՛ դու չըս գա՛րկի:

— Վոլա կը զարկիմ, ըպա չըմ զարկի:

Վըր խոսքին՝ թագավորի աղջիկ յառեջ գիկա, կըսե:

— Թագավոր պապ, ես չունի չենք, հմա տեսա՝ մեղավորն իմ արյակըն է: Տղեն օղորդ կըսես, օր ուրիշ թագավոր մե գա մտնա քու հող, քրդի գարկե, դու չըս դա՛րկի:

Թագավոր շատ կը վարմանա էթումի ու ուր աղջկա պատասխանի վրեն, հրամանք կէնե օր ուր քոշկ ու սարի մեջ ուլմիշ տեղ մե տան տղին՝ ուրին անհոգ ապրի, չըմքի շատ հավնավ, ուր մտքի մեջ դառնուց ուրին փեսա:

էթում տղեն ու թագավորի տղեն կը մեծնեն հըտ չիրարու: էթում՝ քանի կէրթեր՝ կը դառներ զորնդեղ, թագավորի տղեն քանի կէրթեր՝ ուր դոթութենի թարք չըր իգի: Յըմնօր կը կուկեն հըտ չիրարու, չըմնօր դավի-դառարի մեջ են: Աղջիկ չըմեն հաղ կը բռնեթ էթումի կողմ, զախպոր մեղավոր կը հաներ թագավորի չառեջ: Թագավորի տղեն շատ օր կը զվզըցու՝ էթում կը թորկե կէրթա մըտ պառավ՝ դաղեն:

Ժամանակ մե գընցնա՝ Հարաֆ էրկրի թագավոր դուրս գիկա կուիվ վըր մեր ճանանչ թագավորին: Թագավորի տղեն, օր կուվի՝ ձեն կը լսե, կնկա շորեր կը հաղնի, փախնի մտնա ուր մամու փեշերու տակ: Թագավոր ժանդր մառախ կէնե, կըսես.

— Ես՝ հալվոր, իմ տղեն՝ գոթի. ո՞ն պտի կուիվ էնե հըտ դուշ--մընին:

Աղջիկ կըսես.

— Թագավոր՝ պապ, էթում տղեն կէնե, ո՞ն կէնե:

— Ի՛մալ,— կը հարցու թագավոր:

— Կանչե զէնի, խոսա հըտ ուրին, կը տեսնաս՝ օր քու սաղաղեն կէրթա կը մեռնի:

Ո՛ր կանչե, ո՛ր չը կանչե, աղջիկ գելնա կէրթա կանչե: Կէրթա տեսնա՝ հանդե էթումն ու ուր քաղցրիկ դադեն նստուկ դեմուդեմ. գլուխ-գլխի ձավար գիստըկին, օր շուրվա էփին. հմա՛լ անուշ լեխոշ ու բեշ կէնին հըտ չիրարու, իմալ մամ ու տղա:

էթում օր զաղջիկ կը տեսնա՝ կը վարմանա, կը հարցու.

— Ի՞նչ կա-չկա:

— Ի՞նչ պտի էղնի, ըշտե հմլա-հմլա բան:

էթում գելնա հըտ աղջկան գիկա թագավորի չոտք, գլուխ կիտա, կանի:

— Օրգի՛,— կըսես թագավոր,— ըշտե հմլա-հմլա բան:

— Թագավոր ապրած,— կըսես տղեն,— ըսկի մառախ մէ՛նիտու ընձի քու ասկար-լաշկար, ես կէրթամ կուիվ:

Թագավոր կիտա զուր ասկար-լաշկար, տղեն կէրթա կոիվ,
զդուշման ասկար-լաշկար ջարդուփուրգ կէնե, թագավորին գերի կը
քոնե, գնջիլն ի վիզ՝ կը բերե շոքըցու ուր թագավորի յառեջ: Թա-
գավոր շատ կը խնգանա, գելնա էթումի ճակատն ու չերես կը պա-
գե, կըսե:

— Ի՞նչ գուզիս՝ ըսե տամ:

— Ի՞նչ պտի չուզիմ, թագավոր ապրած. իմ աչք վըր քու աղ-
ջըկան, աղջկադ աչք վըր ընձի: Գուզիմ, օր պսակվինք, էրթանք
մըտ մեր դադեն, յոնի ըռհաթ ապրինք:

Թագավոր քիչ կը մնա ուրախութենից խելք թուու, կը հանե ուր
դալալին, հրամանք կիտա, օր կանչե, սաղ ժողովուրդ հանե չոտքի,
ուր հաշվին ուտին-խմին, դուլ-զուռնա զարկին, յոթ օր յոթ գիշեր
հարսնիք էնին:

էթում կառնե զուր կնիկ՝ գիկա մըտ պառավ դադեն, օր ուրանդ
ըռհաթ ապրին:

Ընոնք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնիք ձեր մու-
քազին:

